ուած են այսօր Ռուսաստանի եւ Հայաստանի դռները՝ համաշխարհային եւ Խորհրդային դիւանագիտութեան բազմահազար զոհերի առջեւ։ Այսչափ դաժան լինել չէ կարող, խոստովանենք այդ, ուեւէ ռուս կառավարութիւն՝ ապագայ ազատ Ռուսաստանում։ Անկարելի է, որ նա հայ փախստականների առջեւ՝ դէթ այն չափով բաց չանի իր եւ նրանց, այդ փախըստականների, հայրենիքի դռները, որչափ արաւ թէկուզ մի փոքրիկ, պարտուած ու աղքատացած Բուլգարիա կամ Ցունաստան։

Ինչ խօսք, ապագայ դաշնակցային Ռուսաստանի մի ինքնավար մասը կազմող Հայաստանը տակաւին այն անկախ Հայաստանը չէ, որ կազմում է մեր քաղաքական ձգտումների առարկան։ Բայց դա մի կարեւոր հանգրուան պիտի լինի դէպի ցանկալի անկախութիւնը, որ դալ կարող է նաեւ ուրիշ, արտաքին ու ներքին նպաստաւոր պայմանների դասաւորումով, որին դէմ չլինի անգամ Ռուսաստանը՝ իր իսկ շահերի տեսակէտից։

Ուրիշ խօսքով՝ դերիշխան, անկախ Հայաստանը վերստեղծուել կարող է որպէս արդիւնք միջազգային ոյժերի նոր դասաւորման, ուր ազատ Ռուսաստանը կարող է մինչեւ իսկ նախաձեռնողի դեր ստանձնել, քանի որ միանգամայն հնարաւոր է հաշտեցումը անկախ Հայաստանի եւ ազատ Ռուսիոյ քաղաքական շահերի։

Բոլոր պարագաներում՝ անկախ, դերիշխան Հայաստանն իսկ՝ տնտեսական եւ քաղաքական որոշ յարաբերութեան մէջ պիտի մտնի, իր իսկ շահերից դրդուած, ինչպէս իր դրացի երկիրների, այնպէս եւ ապագայ Ռուսաստանի հետ։

Քաղաքական անկախութիւնը ինքնանպատակ չէ մի ազգի համար, այլ միջոց՝ նրա բովանդակ ոյժերը բազմակողմանիօրէն զարգացնելու համար։ Անհնար բան չէ երբեք, որ այս իսկ՝ ազգային դերագոյն շահերի տեսակէտից՝ մի ազգ յանձն առնի իր կատարեալ անկախութեան, դերիշխան դոյութեան մի որոշ սահմանափակումը։

Եւ իսկապէս, ազգերի քաղաքական զարգացումը միայար, ուղղագիծ ընթացք չունի։ Մի կողմից նա տանում է դէպի ինքնուրոյնութիւն, իսկ միւս կողմից, վերջինիս սահմանափակման գնով, դէպի մերձեցում եւ կապակցութիւն ուրիշ միաւորների հետ։ Կեդրոնացումը եւ ապակեդրոնացումը իրար համընթաց երեւոյթներ են։ Ազգային-մշակութային պահանջը նպաստաւորում է միշտ ապակեդրոն կարգերում, իսկ տնտեսականը՝ կեդրոնացման ճամբայով։ Դրանով պիտի բացատրել որ, օրինակ, մաքսային պատնէշները վերացնելու անհրաժեշտութեան առաջ պատրաստ են իրենց վեհապետական որոշ իրաւունքներից հրաժարուել անգամ մեծ պետութիւնները։

Խնդիրը դրանում չէ, ոչ էլ անկախութեան չրջանակի մասին։ Վերջինս կարող է լինել լայն կամ նեղ, անգամ բաւական սահմանափակուած՝ դաշնակցային կարգերով, նայած պայմաններին եւ իրական ոյժերի յարաբերութեան։

Եւ եթէ մենք քննադատում ենք «Խորհրդային Դաշնակցութիւնը», ոչ թէ նրա համար, որ դաշնակցային կազմը բոլոր պարագաներում ժխտելի է մեզ համար, ընդհակառակը, այլ նրա համար նախ, որ Խորհրդային «Դաշնակցութիւնը» բնաւ դաշնակցութիւն չէ եւ չէ կարող լինել։ Եւ երկրորդ նրա համար, որ այդ վարչաձեւը պարտադրուած է հայ ժողովուրդին՝ օտարի ձեռքով, սուինների ոյժովը։ Ապա թէ ոչ, անկարելի բան չէ, մինչեւ իսկ հաւանական է, որ — կրկնում ենք միշտ՝ տուեալ իրական պայմաններում — հայ ժողովուրդը, ազգային կատարեալ ինքնորոշման իրաւունք իսկ ունենալու պարագային՝ իր ազատ քուէն տայ յօգուտ դաշնակցային կապի՝ ինչպէս իր դրացիների, այնպէս եւ Ռուսաստանի հետ։

Արդէն իսկ ազգերի ազատ ինքնորոշումն է ամէն մի իսկական Ֆեդերիացիայի հիմը։

Ահա այդ՝ ազատ ինքնորոշման իրաւունքն է, որին պիտի ձգտի հայ ազգային քաղաքականութիւնը, անկախ այն հանգամանքից, թէ նա ի վերջոյ կատարեալ անկախութե՞ն պիտի յանգի, թէ՞ դաշնակցային կամ դաշնադրային կապի՝ Անդրկովկասեան երկիրների եւ Ռուսիոյ հետ միանգամայն։

XI

Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստան — ահա, ուրեմն, հայ ազգային քաղաքականու-